USAID FROM THE AMERICAN PEOPLE

unag UN Association of Georgia

USAID ծրագիր
«Միասնություն բազմազանության մեջ»

Երիտասարդների քաղաքացիական և տնտեսական զարգացման ուղղություն

Երիտասարդական կենտրոններ

Երիտասարդական կենտրոնները ներկայացնում են բաց կրթական և քաղաքացիական հավաքատեղեր՝ ամբողջ երկրի մասշտաբով: Նշված տարածքներն երիտասարդներին աջակցում են ներգրավել քաղաքացիական և տնտեսական ակտիվություններին, ինչպես տեղական, այնպես էլ ազգային մակարդակով:

Երիտասարդական կենտրոնների անդամները հնարավորություն ունեն զբաղվել կամավորական գործունեությամբ և մասնակցել կրթական նախագծերի; փոխանակման ծրագրերի միջոցով ճանապարհորդել երկրի տարբեր տարածաշրջաններ; ստանալ կրթություն և այն օգտագործել գործնականում, այդ թվում՝ հորինել և պլանավորել տարբեր տեսակի գործունեություն և երիտասարդական նախաձեռնություն; մասնակցել ստաժավորման, զբաղվածության աջակցության, ձեռնարկության խթանման և այլ ծրագրերի:

Երիտասարդական կենտրոնների նպատակն է.

- Երիտասարդների մոտ աշխատանքի շուկայի պահանջներին համապատասխանող հմտությունների և կոմպետենցիաների զարգացում և երիտասարդների տնտեսական հզորացում;
- Երիտասարդների մասնակցության և ներգրավածության աջակցություն հասարակական և ժողովրդավարական գործընթացներում;
- Երիտասարդների հիմնական կոմպետենցիաների և կյանքի հմտությունների զարգացում;
- Երիտասարդների մոտ հանդուրժողականության, ներառականության և ժողովրդավարական արժեքների ամրապնդում և արևմտյան արժեքների մասին գիտակցության բարձրացում:

Ցանցի շրջանակներում գործում են երիտասարդական կենտրոններ, որոնք բաց են 14-29 տարեկան դեռահասների և երիտասարդների համար:

Ինչու՞ պետք է դառնալ երիտասարդական կենտրոնի անդամ:

Կենտրոնի անդամ դառնալը քեզ հնարավորություն կտա.

- Բարելավել առաջնորդական և կազմակերպչական հմտությունները;
- Մասնակցել տարբեր տնտեսական ակտիվությունների, զարգացնել այն գործնական հմտությունները, որոնք կօգնեն քեզ զբաղվածության հեռանկարները բարելավելու, այդ թվում ձեռնարկատիրական հմտությունները զարգացնելու մեջ;
- Պլանավորել և իրականացնել նախագծեր և երիտասարդական նախաձեռնություններ;
- Այցելել քո երկրի տարբեր տարածաշրջաններ և փոխանակման ծրագրերի շրջանակներում հասակակիցների հետ իրականացնել երիտասարդական նախագծեր;
- Բարելավել անգլերենի իմացության մակարդակը;
- Ստանալ կարիերայի կառավարման և պլանավորման ծառայություններ;
- Մասնակցել ստաժավորման ծրագրերի;
- Մասնակցել ՄԱԿ-ի մոդելավորմանը (Model UN):
- Մասնակցել տարբեր թեմատիկ երիտասարդական ծրագրի, անցնել թրեյնինգներ և դառնալ երկրի ակտիվ քաղաքացի, ով ներգրավված կլինի տեղական համայնքի և երկրի սոցիալական, քաղաքական և տնտեսական գործունեությանը;
- Մասնակցել երիտասարդական կամավորական ծրագրերի, այդ թվում ձեռնակատիրական և բիզնեսի, Եվրատլանտյան ինտեգրման, հանրային առողջապահության, մեդիայի, էկոհամակարգի հետազոտման և այլ ուղղություններով;
- Ստանալ և խորացնել գիտելիքը քաղաքացիական կրթության հարցերով, այդ թվում՝ մարդու իրավունքների, գենդերային հավասարության, մեդիա գրագիտության և մոնիտորինգի, քաղաքացիական ակտիվիզմի, հանդուրժողականության և բազմազանության ուղղություններով;
- Հանդիպել ոլորտի առաջնորդներին, փորձագետներին և հաջողակ մասնագետներին:

Երիտասարդական կենտրոնները գտնվում են՝

- Ախալցիխեի երիտասարդական կենտրոն
  Դեմոկրատ Մեսխերի Միություն
  Հասցե. Ռուսթավելի 26

- Ախալքալաքիի երիտասարդական կենտրոն
  Դեմոկրատ Մեսխերի Միություն
  Հասցե.Տերյան 25

- Քութաիսիի երիտասարդական կենտրոն
  Կրթության Զարգացման և Զբաղվածության Կենտրոն
  Հասցե. Ինգորոքվա 64

- Թելավիի երիտասարդական կենտրոն
  Թելավիի Կրթության Զարգացման և Զբաղվածության կենտրոն
  Հասցե. Դավիթ Ռեկտորի 8

- Զուգդիդիի երիտասարդական կենտրոն
  USAID Unity Through Diversity Program
  Միություն «Աթինաթի»
  Հասցե. Ռուսթավելի 94

- Բաթումիի երիտասարդական կենտրոն
  Անկախ Լրագրողների Տուն
  Հասցե. Մեմեդ Աբաշիձե 48

- Նինոծմինդայի երիտասարդական կենտրոն
  Կանանց Կազմակերպություն Միություն «Փարոս»
  Հասցե. Ճավճավաձե 21

- Գորիի քաղաքացիական ակտիվիզմի կենտրոն
  Բարեկեցության և Զարգացման Կենտրոն
  Հասցե. Թարխնիշվիլի 20ա

- ԹՊՀ երիտասարդական կենտրոն
  Թբիլիսի – Իվանե Զավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարան
  Հասցե. Քեթևան Ծամեբուլու պողոտա 55 (ԹՊՀ 7-րդ մասնաշենք)

- Թբիլիսիի երիտասարդական կենտրոն
  Իլիայի պետական համալսարան
  Հասցե. Ի. Ճավճավաձեի պողոտա 32

- Օզուրգեթիի երիտասարդական կենտրոն
  Երիտասարդ Ուսուցիչների Միություն
  Հասցե. Գաբրիել Եպիսկոպոսի 3

- Գարդաբանիի երիտասարդական կենտրոն
  Քաղաքացիական Ինտեգրման Կենտրոն
  Հասցե. Լեսելիձե 6/5

- Դմանիսիի երիտասարդական կենտրոն
  Քաղաքացիական Ինտեգրման Հիմնադրամ
  Հասցե. Ապրիլի 9-ի 64

- Մարնեուլիի երիտասարդական կենտրոն
  Քաղաքացիական Ներգրավման և Ակտիվիզմի Կենտրոն
  Հասցե. Կոստավա 60

Ծրագրի մասին

«Միասնություն բազմազանության մեջ» USAID-ի հնգամյա ծրագիրն իրականացնում է Վրաստանի ՄԱԿ-ի միությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է Վրաստանում աջակցել քաղաքացիական և տնտեսական միությանը և միևնույն ժամանակ հաղթահարել այն հիմնական խոչընդոտները, որոնք խանգարում են Վրաստանի քաղաքացիների ակտիվ ներգրավվածությանը երկրի քաղաքական, քաղաքացիական և տնտեսական կյանքում:

USAID Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն

Վրաստանում USAID-ն աշխատում է 1992 թվականից: Այդ օրվանից ամերիկացի ժողովուրդը USAID-ի միջոցով 1,8 միլիարդ դոլարի օգնություն է տրամադրել Վրաստանին: Հաջողակ գործընկերության պայմաններում ԱՄՆ-ի կառավարությունն ամեն տարի, մոտ 50 միլիոն դոլար է տրամադրում 55 տարբեր ծրագրերի համար: Այս ծրագրերն աջակցում են Վրաստանի ժողովրդավարական, ազատ շուկայական տնտեսության և Արևմտյան վրա կենտրոնացած զարգացմանը:

USAID-ի ծրագրերն աջակցում են տնտեսական աճին, ժողովրդավարական հաստատությունների զարգացմանը, էներգոանվտանգության հզորացմանը, կլիմայի փոփոխության տեմպերը նվազեցնելուն, կրթության համակարգը բարելավելուն, փոքրամասնությունների և խոցելի բնակչության, այդ թվում՝ էթնիկ և աշխարհագրական սահմանների մոտ ապրող անձանց հասարակությանն ինտեգրմանը:

ՄԱԿ-ի միության մասին

Վրաստանի ՄԱԿ-ի միությունը տեղական հասարակական կազմակերպություն է, որն աշխատում է 1995 թվականից:

Վրաստանի ՄԱԿ-ի միությունը 1996 թվականից գրանցված է «ՄԱԿ-ի միության համաշխարհային ֆեդերացիայում» (WFUNA): Սա հասարակական կազմակերպություն է, որն ամբողջ աշխարհի մասշտաբով 120-ից ավելի երկրի ՄԱԿ-ի միություն է միավորում:

Վրաստանի ՄԱԿ-ի միության Սոցիալան մեդիա ալիքներ

Երիտասարդական կենտրոնների սոցիալան մեդիայի QR կոդը